Մարտի 19-ին և 20-ին անցկացվել է ճապոնական ավանդական կոտոյի համերգ պարոն Նոբուտակա Յոշիձավայի կատարմամբ

Կոտոյահար պարոն Նոբուտակա Յոշիձավան հանդես է եկել ճապոնական ավանդական երաժշտական գործիքի՝ կոտոյի կատարմամբ Երևանի Կոմիտասի անվան Կամերային երաժշտության տանը (մարտի 19-ին) և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում (մարտի 20-ին)։ Համերգները նվիրված էր Ճապոնիայի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին։

Երևանում բացման համերգի ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկան Հայաստանում Ճապոնիայի դեսպան Ն.Գ. պարոն ՖՈՒԿՈՒՇԻՄԱ Մասանորին և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ պարոն Արթուր Մարտիրոսյանը, ովքեր ընդգծեցին երաժշտության կարևորությունը, ինչպես նաև հույս հայտնեցին, որ երկու երկրների միջև փոխանակումներն էլ ավելի կխորանան։

Համերգների ընթացքում պարոն Յոշիձավան համագործակցել է նաև հայ երաժիշտների հետ՝ դահլիճում ստեղծելով ներդաշնակ մթնոլորտ։ Երևանում նա ելույթ է ունեցել դուդուկահար Արտակ Ասատրյանի, քանոնահարուհի Մարիաննա Գևորգյանի և «Հովեր» պետական կամերային երգչախմբի հետ, իսկ Գյումրիում՝ Պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոսներ՝ դուդուկահար Կարապետ Շաբոյանի և քանոնահարուհի Անահիտ Վալեսյանի հետ։

Պարոն Յոշիձավան կատարումով է հանդես եկել նաև «Իրոհա» հայ-ճապոնական կրթական և մշակութային փոխանակման կենտրոնի կողմից կազմակերպված «ՆԵԻՐՈ» Ճապոնական երաժշտական մրցույթ-փառատոնի շրջանակներում, որն անցկացվել է մարտի 19-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում։

Երկու միջոցառմանն էլ պարոն Յոշիձավայի ավանդական և ժամանակակից կատարումները և կոտոյի գեղեցիկ երանգները հիացրին հանդիսատեսին։

Դեսպան Ֆուկուշիմայի ողջույնի խոսքը

Նախարարի տեղակալ պարոն Մարտիրոսյանի ելույթը

Պարոն Յոշիձավան ողջունում է հանդիսատեսին

Պարոն Յոշիձավայի կատարումը

Դուդուկահար պարոն Ասատրյանի հետ համատեղ կատարում

Քանոնահարուհի տիկին Գևորգյանի հետ համատեղ կատարում

Համատեղ կատարում «Հովեր» պետական կամերային երգչախմբի հետ (Խմբավար՝ Նարինե Ոսկանյան)

Հանդիսատեսը Երևանում

Դեսպան Ֆուկուշիմայի ողջույնի խոսքը Գյումրիում

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն տիկին Հարությունյանի ողջույնի խոսքը

Համատեղ կատարում դուդուկահար պարոն Շաբոյանի և քանոնահարուհի տիկին Վալեսյանի հետ

Հանդիսատեսը Գյումրիում